ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ . № 5. 1957 Общественные науки

Գ. Ա. ՂԱՓԱՆՑՅԱՆ

Մայիսի 3-ին, երկարատև և ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց հայագիտության հին սերնդի վերջին մոհիկանը՝ ակադեմիկոս գիտնական, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Ալյոշայի Ղափանցյանը։

Գ. Ա. Ղափանցյանը ծնվել է 1887 թ., Աշտարակում։ Նախնական կրթությունն ստանում է հայրենի գյուղում, սովորելով երկդասյան ուսումնարանի մինչև 5-րդ բաժանմունքը։ 1899 թ. կրթությունը շարունակելու նպատակով տեղափոխվում է Պետերբուրգ, որտեղ գիմնազիան ավարտելուց հետո ընդունվում է Պոլիտեխնիկական ինստիտուտը, սակայն մի տարի սովորելուց հետո տեղափոխվում է Պետական համալսարանի Արևելյան ֆակուլտետի հայերեն-վրացերեն-պարսկերեն բաժինը։ Գ. Ա. Ղափանցյանը 1913 թ. ավարտում է Պետերբուրգի համալսարանը և վերադառնում Հայաստան։

1913—1918 թթ. Գ. Ա. Ղափանցյանը էջմիածնում զբաղվում է գիտա-մանկավարժական գործունեությամբ։ Նրա գիտական առաջին աշխատանքները տպագրվում են «Արարատ» ամսագրում, 1914 թ. («Հնագույն մի քանի հուշարձաններ», «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու»)։

1918 թվականին Գ. Ա. Ղափանցյանը փոխադրվում է Երևան։

Երևանի պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից Գ. Ա. Ղափանցյանը հրավիրվում է համալսարանում դասախոսելու։

1943 թ. Գ. Ա. Ղափանցյանը ակտիվորեն մասնակցում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրմանը։ Ավելի քան 6 տարի նա ղեկավարել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը, իսկ 1950 թ. մինչև 1956 թ. աշխատել է Լեզվի ինստիտուտում որպես դիրեկտոր։

Գ. Ա. Ղափանցյանին հետաքրքրում էին մեր լեզվի հնագույն շրջանի հարցերը։ Առանձնապես մեծ են նրա ծառայությունները հայերեն և խեթերեն, խուրիտերեն, ուրարտերեն, ասուրերեն ու այլ մեռած լեզուների ուսումնասիրությունը պարզելու գործում։

Ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանի գիտական հետազոտությունները նվիրված են հայագիտական կարևոր պրոբլեմներին, հայ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի գոյացման ու հետագա զարգացման խնդիրներին։ Նրա ուսումնասիրությունները հանդիսանում են երկարատև և քրտնաջան աշխատանքի արդյունք։ Դրանցից հատկապես պետք է նշել „Chetto Armeniaca"-ն (1931), «Ընդհանուր լեզվաբանությունը» (1939), «Ուրարտուի պատմությունը» (1940), «Խեթական ասույթները հայերի մոտ» (1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» (1940), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (1945), «Հայոց լեզվի ծագման հարցի շուրջը» (1946), «Հայաստան՝ հայերի բնօրրան» (1948) և այլն։

1930-ական թվականներից Գ. Ա. Ղափանցյանը հայագիտական հարցերի ավելի լայն ընդգրկման և պարզաբանման համար ուսումնասիրում է փոքրասիական մի շարք մեռած լեզուներ, օրինակ՝ խեթերեն, ուրարտերեն, խուրիտերեն և այլն։ Գ. Ա. Ղափանցյանի աշխատությունները պարզում են, որ այդ լեզուները զգալի դեր են կատարել հայերենի բառապաշարի հարստացման գործում։ Նա խեթական և հայկական լեզվական բազմաթիվ ընդհանրություններ հայտնաբերեց և ապացուցեց, որ դրանք փոխառություններ չեն, այլ գալիս են վաղեմի ժամանակներից, թերևս հայ ժողովրդի կազմավորման շրջանից։

Ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանը Սովետական Միության խոշոր ուրարտագետներից է, հայերեն լեզվով նա առաջինն է գրել ընդարձակ աշխատություն ուրարտերեն լեզվի պատմության և կուլտուրայի մասին՝ բազմաթիվ վերծանումներ կատարել և շատ խնդիրներ պարզաբանել։

Երկար ժամանակ զբաղվելով ընդհանուր լեզվաբանության հարցերով, նա գրեց ընդհանուր լեզվաբանության առաջին հայերեն մեծածավալ ձեռնարկը։

Ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանի, իբրև գիտնականի, մի գնահատելի կողմն էլ այն է, որ նա լեզվաբանական հարցերի հետ միասին լուծում էր նաև պատմագիտական հարցեր, նրան հետաքրքրում էր հայ ժողովրդի գոյացման պրոցեսի հարցը, իր լեզվաբանական ամբողջ գիտությունը ի սպաս էր դնում այդ հարցի լուծմանը։

Ստուգաբանելով հայերենի մի շարք բառեր և լեզվական երևույթներ, Գ. Ա. Ղափանցյանը վերականգնեց կուլտուր-պատմական այն կապերը, որ հայ ժողովուրդը ունեցել է իր շրջապատի հնագույն ժողովուրդների և ցեղերի հետ՝ մեր դարաշրջանից հազարամյակներ առաջ։ Նրա թողած ժառանգությունը սովետական հայագիտության հետագա զարգացման հարուստ աղբյուր է։

Գնահատելով Գ. Ա. Ղափանցյանի ծառայությունները սովետական գիտության առաջ՝ Հայկական ՍՍՌ կառավարությունը 1942 թ. շնորհեց նրան գիտության վաստակավոր գործչի կոչում։ 1943 թ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսների առաջին կազմի մեջ, ըստ արժանվույն, ընտրվում է նաև Գ. Ա. Ղափանցյանը։

Գ. Ա. Ղափանցյանը պարգևատրվում է Լենինի շքանշանով։

Ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանը այլևս մեր շարքերում չէ, նա բոլորից իր կենսածիրը, կատարելով գիտության համար այնքան, որքան նրա կարողություններն էին թույլ տալիս, իսկ այդ կարողությունները մեծ էին։

Մեր գիտական հասարակայնությունը վառ կպահի Գ. Ա. Ղափանցյանի՝ մեծանուն հայագետի հիշատակը։